

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien


ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները
ևս չի'ն տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է . իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

Բարձր - ներ - ետքագրութեան
ԵՂԻՔԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ԱՐՁԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱՐԹԵՐԹ

ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԻՔՈՍ

Ցարեկան դրո - ողջ 30

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Ցարեկան փրակց 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍԵՆԵՐԸ փոխարեւ
վերաբերէ գրեմ արտի բլլան .

Թի' ԱՐՇԱԼՈՍՍԻ ևս թի' ՏՊՈՒՐԱՆԻՆ
վերաբերեալ նիւթական խնդրոց հարաւար
պէտք է դիմել նորագործական հասցեով
թերթիս Մասնախարարին . որ է'

ՊԵՏՐՈՎ ՓՈՒՓՈՋԵՆԱՆ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵՍԱԲԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներ ու զրպակի պատասխանա-
տու են իրենց գրածներուն

ZUSC 40 ՓԱՐԱ ՈՂՋ

ԱՐՅՈՒՆՔԻ ԿԱՅԼԱԿՆԵՐ

ԳՄԳԻԿԻ ԵՒ ՍԵՊՈՒԷԻ

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐՈՒՆ

« Մասնուր մը կը սերտի մըս-
փիս արքեւ . մասնուր թի' Հայ
վարիչ ուղեղը ինչպէս կը գոր-
ծածէ այս քակիպիս նիւթերը :

Կ. Յ. ԳՐԱԿԱՆՆԵՐ

Ինչպէս որ հրահանգիչ խոր-
հորդածութիւններով առկայ են, եր-
բեմնի սիրեցեալ ուսուցիչ-պաշտօ-
նակիցս կարապետ էֆ. Գարակիւ-
եան, « Մա'հ թէ անմահութիւն »
խորագրոյն ներքեւ « Ա. Չ. Ի. Բ. տա-
րի 6 թ. » թուոյն մէջ երկու վաղա-
թառամ հոգիներու հայկական հորի-
զոնէն անհրաժեշտ կ'ըլլայ :

Մին՝ Սեպուհի՝ վասպուրակա-
նի եղբորական դէպքերուն, իսկ միւսը՝
Գագիկ՝ իր ընտանեկան բոյնին մէջ,
Փշտ թէ փետրաթաւ բարձի մը
վրայ հանգչեցուցած իր գլուխը : Գա-
անձանթ կը մնայ մեզի . . .

Տ. Գարակիւեան իր երկու դե-
ռահասակ ազգականներուն վրայ
թառամ արցունքովը՝ ինձի ալ կը
թելադրէ քսանէ աւելի տարիներ
դէպի ետ անհարկ մը ուղղել, ու
այդ զոյգ մը անժամանակ կենաց-
րաններուն հոյակապորտուն առջև
պահ մը խոկալ թէ՛ ինչէն առաջ կու-
գայ այն տեսակ մը համակրական
հասանքը, որ վրս ալ կը լացնէ ի-
րեն հետ :

Թեպէտև ինքնակենսագրական
նօթերով զբաղելու ստենը չէ . ո՛չ
ալ հանգամանքները թոյլատու են
ինձ համար, սակայն՝ քանի որ սի-
րոյ խորհրդանշանն արտասուքը կը
հոսի աչքերէս՝ Տ. Գարակիւեանի
տեքուչ և սրտակեղէք տողերուն ի
տես, անշուշտ պիտի ներուի ինձ
քանի մը տողով շուխտակ վաղա-
թարքամ հոգիներուն սպասանեկան
օրերը վերալուչել :

Արաբիկի Սեպ. Կեղ. Ուսում-
նարանին մէջ Յակոբ էֆ. Չարքեա-
նի և Բարթող - Սուր էֆ. Թաթար-
եանի ծաղիկեալ շրջաններուն աշա-
կերտելէ յետոյ, 1883 ին՝ գեռ. տա-
սըն և եօթը տարեկան պատանի-
քի մը համարձակ տեսակէն - Ու-
սուցչութեան կոչուեցայ Ս. Յակոբ
թաղի վարժարանին մէջ, ուր Ալէք-
սանդրապօղի խստաբարոյ Գրիգոր
վրդ. Աբրահամեան - ան ալ կուտա-
րան - միապետութիւն կը տիրապետէր
թաղի վարժարանին և եկեղեցոյն
վրայ :

Վարդապետը՝ որ ինչպէս կը
պատմուի, 96 ի դէպքերուն սպան-

նուած էր չարաչար մահով մը . ազ-
գասէր, անշահախնդիր և չափազնաց
ուղղամիտ մէկն էր, և առանց ո՛ր
է վարձքի կամ փոխարինութեան
սպասելու, կը պաշտօնավարէր այդ
թաղին մէջ :

Ի մեծ գոհացումս բոլոր թաղե-
ցիներուն չորս տարի անընդհատ,
կարելի եղածին չափ չէզոքացնելով
վարդապետին անտեղի միջամտու-
թիւնները, հոս պաշտօնավարելէ
յետոյ, քիչ շատ տարիքով և ուսու-
մով առաջացած աշակերտներն ալ
ինձի հետ կեդրոնականը փոխա-
դրուեցանք, ուր աւելի նպաստա-
ւոր պայմաններով պաշտօնի կոչ-
ւած էի :

Սոյն փոփոխութեանց ատեն,
Կեղ. Ուսումնարանի մէջ կը պաշ-
տօնավարէին Սարգիս Ամատեան,
Պետրոս Փոլարեան և Կարապետ
Գարակիւեան էֆէնտիները, ուրիշ
այցելու դասաւանդներով, իսկ չորրորդ-
մնայուն պաշտօնեայն ես պիտի ըլ-
լայի, ընդհանուր հանդուրժեան հետ
կարգ մը երկրորդական դասերով
ծանրաբեռնուած :

Գերմանական - դասարանական
դրութիւնը տակաւին մուտ դտած
չէր Կեղ. Ուսումնարանին մէջ . Ըն-
դարձակ սերտուութեան սրահ մը
ունէինք վեց դասարաններով, և ա-
շակերտաց թիւը կը բարձրանար 120 ի-
մեծագոյն մասամբ չափահասներ :

Թեպէտև վարժարանական վեր-
ջին նորածնութիւններով խճողուած
չէր տակաւին Կեղ. Ուսումնարանը
սակայն ներքէս վարժապետեան Պատ-
րիարքի հրաշունչ փառաբանու-
րիւնը խորունկ արմատներ ձգած էր
Արաբիկեցիներու սրտին մէջ : Յա-
ճախողէպ էին Միտայեալ ընկերու-
թեանց հետաւոր վարժարաններու
տեսուչներուն այցելութիւնները, ա-
սանք միութեան կազմը զօրացնե-
լու միջոցներ էին : Իրստ լաւ կը
յիշեմ Մկրտիչ Սարգեանը՝ Միհրան
Խորթուածեանի և Յ. Մանուէլեա-
նի օրերուն մէջ : Ամենածաղկեալ ե-
րեսարարութիւն մը ունէր Արաբ-
իկը . դէպի յառաջգիւժութիւն նշա-
նակելի և արշաւաւոր քայլեր կ'առ-
նուէին . իրական կենդանութիւն մը
կը տիրապետէր երկրին ամէն կող-
մերը : Ու հոգիս կը քաղուի յիշե-
լով Արաբիկի այն ատենուան բար-
դաւած և զուարթուն վիճակը, իսկ
այսօրուան միտրակայներու վերած-
ուած աւերակները :

Հազիւ նոր քաղաքականութիւ-
նը ընդգրկուած էր, ուրկէ աւելի
յառաջադիմական քայլեր կ'սպաս-
ուէր, և ահա մեր հայրենիքին
մէջ՝ ընդարձակ սահմանները վճար

գործեց այլատերութիւն . մակարածա-
յին զեղծութիւնները հաստատման տա-
րածեցին իրենց ճիշդաւորութիւնը,
ու հոգիներու այլանդակով մը հակա-
յաքայլ առաջ անցաւ, և այսօր՝ հա-
րեանցի անհարկով մը դիւրին պիտի
ըլլայ հաստատել թէ՛ Արաբիկը ու-
րիշ շատ մը տեղերէ աւելի, իր մոխ-
րակոյտերէն ոճրագործներու նկա-
տելի թիւ մը դուրսմերա . . .

Նոյն ատենները Կեղ. Ուսում-
նարանի բարձրագոյն դասարանի ա-
շակերտներն էին ողբացեալ Գագիկ
որուն դասնակցիմ մահը այսօր ար-
ցունքներ կը խլէ մեր աչքերէն . Ա-
պահ Պետրոսեան, Վարդան ճիւ-
մէճեան, Տրդատ, Տաճատ, Գուր-
գէն, Սեպուհ (Գալստեան) Արշամ,
Վաղարշ և Եղիշէ . այս վերջինը պահ-
դրութեան չարքայութիւն պա-
հանջող կեանքին չ'տոկալով՝ հողա-
կայտ մ'է այսօր, և կարծեմ հայրե-
նիքէն ալ հեռի անձանթ տեղ
մը :

Գագիկ բարձր հասակով, թիկ-
նեղ և հուժկու կազմ մը պիտի ու-
նենար . շատ մը լաւ լաւ յատկու-
թիւններով և բարեհամբոյր բնաւո-
րութեամբ մը օժտուած, ու մեծ
ապագայ խոստացող . ա՛յս էր ար-
տաքին երևոյթը, որ գեղապարտը
և անկեղծ սրտի մը արտայայտու-
թիւնը կը ցոլացնէր :

Վասպուրականի զոհը, Սեպու-
հըն ալ այդ ատեններու աշակեր-
տաց ստորին կարգերուն մէջ քանի
մը ամիս միայն մնալով կարին մեկ-
նեցաւ, ուրկէ իր հայրը կոչած էր
զինքը, բարձրագոյն կրթութիւն մը
տալու համար իրեն :

Սեպուհ՝ թէև նիհարակազմ
և նոյն իսկ զինքը գիտողներուն
վրայ վատառողջի սպաւորութիւնը
կը թողար, սակայն չափազանց աչ-
խոյժ եռանդուն և նոյնպէս ալ սը-
րամիտ էր :

Հակառակ իմ պաշտօնս շրջա-
պատող կարգ մը գեղարարութիւննե-
րու, ուսուցչական խմբին համերաշ-
խութիւնը և աշակերտաց մեծէն մին-
չև փոքրը դէպի յիս տաճած համա-
րումը, սէյն ու համակրանք՝ իս-
պառ կը մոռցնէին ինձ գեղարարոյն
պաշտօնիս տաղտուկներն . ա՛յնչպի-
նքնագիտակից պարտաճանաչու-
թիւն մը կը տիրէր պատկառելի թիւ
մը ներկայացնող 120 աշակերտաց
մէջ :

Օրին մէկը՝ հակառակ պաշտօ-
նակցաց ստիպումներուն, որոնք չա-
փէն աւելի կը սիրէի, և հակառակ
նոյն իսկ Առաջնորդին սպառնալից
հրահանգներուն, հրաժարելով՝ պան-

դրութեան մասալը ուսիս զարկի
դէպի արտասահման :

Արաբիկի մէջ տեղի ունեցած
և յառաջգիւժական համարուած ող-
խուր փորձերը, այլ ևս զուտանք
պատճառած էին ինձի, որոց մա-
սին բառ մը իսկ ըսել չ'պիտի ու-
զեմ :

Նախագագու՛մ մը՝ կարծես ա-
պագայ դէշ գուշակութիւններու կը
մղէր զիս, հայրենիքիս համար, ու
ահա՛ ցաւալի է ըսել, իրականու-
թեան հանդէպ կը դառնուիք :

...

Օ՛հ . պանդխտոյն սա հայ-
րենիքէն մեկնումը . քանի մը սոխ-
րական տողեր կարի անբաւական են
անոր սղղած հզօր սպաւորութիւն-
ները ուրիշին փոխանցելու համար :
Իմ ալ մեկնմանս օրը պատմա-
կան և նշանակալից օր մը եղաւ .
Վարժարանին աշակերտները՝ ամբող-
ջովին խօսք մէկ ըրած, նոյն իսկ ըմ-
բոստանալով ուսուցիչներու և Առաջ-
նորդին ալ մասնաւոր պատուէրնե-
րուն դէմ, կէս օրուան ճաշերին
մէջքերին կայած՝ քաղաքէն ժամ
մը հեռու ընդարձակ դաշտի մը մէջ
հաւաքուած էին . կարծեմ բանակա-
տեղի մը ըլլար այդ տափարակը :
Երկու աշակերտներ կարգապահու-
թեան կը հսկէին : Իսկ վարժարանը
ինքնին փակուած էր :

Երախապիտական այս խիստ
յուզիչ մեծարանքը շատ շատերուն
նախանձը շարժած էր . մինչև իսկ
աշակերտները չարաչար պատիժնե-
րու ենթարկելու սաստիճան, և այս
պատիժի հրահանգը Գեղ. Առաջնոր-
դէն կուգար . . .

Մեկնող կարաւանին խմբակցու-
թիւնը աշակերտներու հաւաքուած
տեղէն անցնելու պահուն էր, երբ ա-
սանք միտրեան և աննկարագործի
ներդաշնակութեամբ երգել սկսան
ազգային երգերէ մէկ քանիները .
զինուորական գնացքով մինչև « Զուրի
Աչք » կոչուած տեղը, որ ճամբորդ-
ներու բաժանման վայր սահմանուած
է :

Բանի մը վայրկեան դադարէ
մը յետոյ, վերջին մնաք բարոյները
կարտասանուէին : Իմ կարգին շարք
մը յորդորներ կարգայի աշակերտ-
ներուն, որոնց ա՛կէն ալ յուզուած
կուլային : Գագիկն ալ կուլար ա-
ռատահոս աղբերակը եղբորդ մեկ-
րիւններու շրջանակին միացած, ու
այսօր քսանէ աւելի տարիներէ յե-
տոյ՝ երբ իր դառնակցիմ մահը կը
լսեմ, տարիներով բանտարկութեան
առթուած թերևս, կը յիշեմ ճիշդ
այն բաժանման տեղը, « Զուրին Աչ-
քը », ուր արտասուածոր աչերով

կը հեկեկար Գագիկ . ու ես ալ կու-
լամ հիմայ Գագիկին և այն անհա-
մար ասուպանման շիջանոց կեան-
քերուն վրայ, և « մտածում մը կը
ներևտուի մտխու առջև . մտածու-
մը քե՛ հայ վարիչ ողորդ ի՞նչ
պիս կը գործածէ այս քանկազին
նիրքերը : »

Յարգանք յիշատակիտ սիրեց-
եալ և բազմաշարար Գագիկ : Հան-
գիտ սակերացող, ո՛ր գիտակից պար-
տաճանաչութեանդ զս՛ Սեպուհ :
Դեռ ո՛րքան պիտի լանք մենք . . . :
Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

ՄԱՀ ԹԷ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Գորունը այն ինչ սկսած՝ վաս-
պուրակներ գումեց արգէն իր յե-
զափուսական երիտասարդութեան
սիրելիզոյն գէմքերէն միոյն ան-
հետացու մը : Սեպուհը սպաննուած ,
զոհ իր անձնուիրութեան , անձնուէր
մինչև իր հուսկ յետին վայրկեանը ,
նոյն իսկ մահը զիմպարաւելու իր
որոշումին մէջ : Երախտագէտ վաս-
պուրակներ կ'արձանագրէ պինք իր
պաշտելի գործիչներու շարքին մէջ :

Եւ զեռ գորունը չաւարտած ,
զեռ Սեպուհի ձօնուած մեր ար-
ցունքները չի ցամքած , նոր գոյժ
մը կը համին շանթաւարել մեզ :
Գագիկը մեռած , իր այն ինչ կազ-
մած ընտանեկան բոյնին մէջ , իր
մանկամարդամուսինը , Անահիտը ,
երէկուան հարսը , այրի մը՝ և իր
փոքրիկ Հրազդանը որբիկ մը թող-
ուած . . . :

Ու այսպէս , երկու ամսուան
չըջանի մը մէջ , հայ ծաղիկ երի-
տասարդութեան հորիզոնէն կ'անհե-
տանան երկու գէմքեր , որոնք հայ
հոգիներու զխաղից հիացումը գը-
րաւած էին :

Սեպուհը , Երուանդ Քէօսէեան
մօրաքեռսորդիս , ձեռնարանի շրջա-
նաւարտ , լուրջ և հանդարտ գոր-
ծունէութեան տիպարն էր : Իր ըն-
տանիքէն ու իր ամբողջ շրջանէն
անջատուած , երիտասարդութեան
բոլոր հրապարակներուն հրաժեշտ տը-
ւած , կ'աշխատէր , անձայն , անշը-
չուկ և խորին գիտակցութեամբ ու
հեռատեսութեամբ կը պատրաստէր
վասպուրականի ինքնապաշտպանու-
թեան գործը :

Գագիկը , Յակոբ Տէվէճեան ,
աներորդիս , որ այն ինչ պատանե-
կութեան սեմին վրայ թեւակոխած ,
ճաշցած էր յեզափոխական պայքա-
րը և պարզած էր հոգեկան անզու-
գական կորով մը , զոր տանեկու
տարիներու անընդհատ բանտարկու-
թիւն մը չէր կրցած ընկճել , տեղի
կուտայ անսուք հիւանդութեան մը
վճիռին առջև :

Եւ ո՞վ չի ճանչնար Գագիկը ,
իւր կորովը , իր հոգին , որ կը թըր-
թուայ իր « Բանտարկեալի մը նօ-
թեր » ուն իւրաքանչիւր էջին մէջ :

Արցունքը , սիրոյ առաջին խոր-
հրդանշան , ինքնաբերաբար կը հո-
սի մեր աչքերէն : Մարդկային սիր-
տը չի կրնար համակերպել Սեպուհ-
նեղէ և Գագիկներէ բաժնու ելու գա-
ղափարին : Բայց յուզումին կը յա-
ղորդէ մտածումը : Կը սկսինք խոր-
հիլ : Սեպուհը սպաննուած , Գա-
գիկը մեռած . . . : Կարելի իրողու-
թիւններ են ասոնք : Մահը ինքնին
արգէն , որեւէ պարագայի մէջ , պարզ
փոխանցում մըն է , գոյութեան մէկ
ձևը կը դադարի և միտք , բարձրա-
գոյնը , կը սկսի : Գերեզմանը վախ-
ճան մը չէ երբէք , այլ հանգրուան
մը երկու կեանքերու սահմանին
վրայ :

Բայց երբ ինչորքը Սեպուհի և
Գագիկի պէս երիտասարդներու վը-

րայ է , որոնք մարմնացումն եղած
են անձնուիրութեան և գերագոյն
զոհողութեան գաղափարականին ,
որոնք նոյն իսկ յեզափոխական ար-
գաւանդ շրջանի մը աշուտագոյն
ձգտումներուն արտայայտութիւնը
եղած են , մահու ան սովորական նը-
շանակութիւնը տեղի կուտայ յիշա-
տակի անմահութեան մեծ ուժին
առջև : Ազգի մը անձնուիրագոյն
զուակները , Աեպուհներն ու Գա-
գիկները , երբէք չեն մեռնիր , ա-
նոնք կ'ապրին և շարունակ պիտի
ապրին գիտակից երիտասարդու-
թեան մը սրտին մէջ , անոնց յիշա-
տակը օրագրան աւանդ մըն է և ի-
բրր այն պիտի յաւերժանայ հայ ճըշ-
մարիտ հոգիներու ներշնչարանին
մէջ :

Մահուան գաղափարին առթիւ
միտքարական է արգէն մտածել
բանաստեղծին հետ՝ թէ ինչ ինչ
կեանքեր այնքան գեղեցիկ են , որ
աւելի բարձր մթնոլորտի մը կը յար-
մարին քան մեր մտարկի միջա-
վայրին : Եւ սպա կսկիծի տեսակե-
տէն դատելով մահ մը այնքան ա-
ւելի ցաւալից է՝ որքան կանխահաս :
Լճիկի՛նքը հիւստիք երբեք իր ճամ-
բուն վրայ ծաղիկներ կը քաղէ ,
զայնա երկիրք փոխադրելու և ա-
նոնցմով սուրբերու կուրծքերը դար-
գարելու համար : Եւ դարձեալ ասու-
զերն ալ կը մարին , բայց ուրիշ
երկնակամարի մը վրայ փայլելու
համար : Կեանքը տիեզերական օրէնք
մըն է , ոչինչ կը ջնջուի : Եւ մեր
այս երկու սիրելի ազգակիցները ,
երիտասարդ , կը մեռնին կեանքի
գարունին մէջ , ամբան ու ձմրան
փորձառութիւնը չի ստացած , մեղ-
քի , ամօթի , անպատուութեան
տիրութիւնները չի ճանչցած : Եւ
արգէն ինչորք այն չէ թէ մարդիկ
որչաք կ'ապրին , հապա ինչպէս
կ'ապրին , ի՞նչ դեր ու պարտակո-
նութիւն կը ստանձնեն կեանքի մէջ
ինչպէս կը կատարեն զայն և յետոյ
իրենց երկրաւոր կեանքի վախճա-
նին ի՞նչ ցաւ , ի՞նչ յիշատակ և ինչ
ներշնչում կը թողուն իրենց ետին :
Մահեր կան , մահեր ալ կան , վիշ-
տեր կան , վիշտեր ալ կան : Երբ ե-
րիտասարդ մը անկեղծ ու ճշմարիտ
հայրենասիրութեան գեղեցիկ կեան-
քը ապրած է , անոր թողած կսկի-
ծը ընդհանրական կ'ըլլայ :

Փոխան մօր մը , քրոջ մը կամ
ընտանեկան սահմանափակ շրջանա-
կի մը սովորական ու բնական սու-
զին , ամբողջ ժողովուրդ մը կը սը-
զայ և ազգային անձկութեան , ցաւ-
ի և յարգանքի քաջաբերական տե-
սարանը կը պարզէ : Անոնք , հեռա-
ցողները , ամբողջ ժողովուրդին հա-
մար ապրած են և ժողովուրդն ալ
ընդհանուր վշտակցութեան իր ե-
րախտագիտական պարտքը կը հա-
տուցանէ :

Եւ երբ այսօր , մեր ընտանե-
կան թարաստանէն այս երկու ծա-
ղիկները կ'անհետանան , ծաղիկներ ,
որոնց անուշ բոյրը մեր մթնոլորտին
գիւթիչ հրապարակ կազմած էր ,
մտածում մը կը ներևուի մտխու առ-
ջև , մտածումը քե՛ հայ վարիչ ու-
ղորդ ի՞նչպէս կը գործածէ այս
քանկազին նիրքերը : Հայ հոգը վե-
հանձնօրէն հայթայթած է անձնու-
րութեան պաշարը : Հայ մայրերը ի-
րենց աշուտագոյն զուակները յանձ-
նած են ազգային ճակատագրին :
Եւ այսօր հայ ժողովուրդն ալ իրա-
ւունք ունի , կամ աւելի ճիշդը
պարտականութիւն ունի շահագրը-
ղբուելու թէ հայ ազատագրական
շարժումին վարիչները ի՞նչ արդիւնք
ներ կ'արտադրեն այդքան անդին
կեանքերու զոհաբերութեան գնով :

Եւ տխուր պիտի ըլլայ մտածել ,
նոյն իսկ վայրկեանի մը համար ,
թէ բուր այս նուիրական զոհողու-
թիւնները փոտնուած կրնան ըլլալ ,
եթէ հայ վարչական կարողութիւնը ,
հայ միտքը , չի գիտնայ հատաս-
րիլ հայ սրտերու հիւանդի անձնու-
րութեան : « Երասցոյն իր ճաշարու-
թեան հարց մըն է առ , որ կենսա-
կան կարեորութիւն ունի ամբողջ
ազգին համար :

Ինչորքը գրամի վրայ չէ :
Երբ ազգ մը իր անձնուիրագոյն
կեանքերը կը գնէ ի սպաս դատի
մը , օրը օրին կը հետեւի անոր , օր
մըն ալ կրնայ ժամանակը հասած
համարիլ մտամոխի նստելու և իր
ազգային ճակատագրի վարչութեան
հաշուեկշիւը քննելու : Եւ իր յըն-
նութեան արդիւնքը մեծագոյն ազ-
գակն է սրտելու թէ ազգը որքան
պատրաստ պիտի ըլլայ նոր նիւթ
նոր պաշար հայթայթելու գործին
հետապնդումին , ազգային խեղճին
համար : Եւ հուսկ ապա ի՞նչ ներ-
շնչում այս գեղեցիկ կեանքերու
մէջ հայ ընդհանուր երիտասարդու-
թեան համար : Այս կեանքերը որոնք
գիտաւորի մը պէս սորհ մը փայլե-
ցան հայ պայքարի հորիզոնին վրայ ,
պարտականութեան ուղին կը ճշգրեն ,
անոնց համար , որոնք արտասահմա-
նի հեշտ կեանքի յորձանքին մէջ ա-
մէն ինչ մտացած , անգիտակից ու
աննպատակ գոյութեան մը տխուր
տեսարանը կը ներկայացնեն : Կ'ար-
ժէ որ յիշատակի հորիզոնին վրայ
այս վե՛հ ու բարձր օրինակները
փայլին , գրաւելու համար ուշը գի-
տող և վեհին ու բարձրին ձգտումը
ունեցող երիտասարդութեան հա-
մար : Հայ կեանքը նոր Սեպուհե-
րու և Գագիկներու պէտք ունի :

Ա.Զ. Կ. Յ. ԳԱՐԱԿԻՆԻԿԱՆ
(Պոսթօն)

**Ա.Զ.ԳԱՅԻՆ
ԼՈՐԵՐ**

ԼԷՕԻ ՅՕՐԵԿԱՆԻՆ
ԿԱՀԻՐԷԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Գահիրէէն հեռեկալ նուիրա-
տուութեան ցանկը կուտանանք ի
հրատարակութիւն :

Մեր գրական փառքերից մե-
ծանուն Լէօի գրական և հասարա-
կական գործունէութեան քանհինգ
ամեայ յօրելեանին գրամական նը-
իրատուութեամբ մասնակցելու հա-
մար Պ. Պ. Խէրեանի և Ն. Մալու-
եանի հետ խորհրդակցելով որոշե-
ցինք նոյն նպատակով գիւթիլ Կահի-
րէի հայրց : Այդ առթիւ տեղւոյս
գիտակից և արժանաւոր վարձատ-
րող մեզ ծանօթներից ունեցանք հե-
տեկաններու սիրայօժար մասնակ-
ցութիւնը :

Տէր Մկր. Մ. Վ. Աղաւնուհի 120.
Տ. Եղիկ Արք. Ապահուհի՛ 20, Տ. Աե-
տիս ք. Շաղոյեան՝ 50, Տ. Մամբէ-
ք. 50, Տ. Յարութիւն ք. 50, Յով-
ք. Մկրիւն՝ 38, 50, Պ. Պ. Խէր-
եան՝ 500, Աեւտիք Լաւանայ՝ 300,
Բէմպէճեան Եղբարք՝ 300, Վսեմ.
Պ. փաշա նուպար՝ 200, Պ. Պ. Մ.
Անդրանիկեան՝ 200, Մեղրեան Եղ-
200, Ոմն՝ 200, Տնք. Պ. Մախոխեան
150, Յով. Տէրիլեան՝ 100, Գ. Թուր-
եան՝ 97, 50 Վ. Գալիաքեան՝ 97, 50
Հ. Ազատեան՝ 97, 50, Մ. Մաճառեան
97, 50, Պաքըճեան Եղ. 97, 50, Ոմն՝
97, 50, Գ. Թափալեան՝ 97, 50, Ե. Պէյ
Աղաթոն՝ 97, 50, Պէրդէրեան Եղ-
97, 50, Յով. Սանտալեան՝ 97, 50,

Մ. Արեան 60 , Յ. Փէհրիզեան 50
Յ. Մարաֆ 50 , Առ. Փափաղեան
50 Գ. Տէլի 50 , Շէրիտեան պէյ
50, Ճիվանեան Եղբարք 50, Մ. Մա-
նուկեան Որդիք 48, 75 Մ. Մարտի-
րոսեան 48, 75 Յ. Ճէպէճեան 48, 75
Կ. Քէչէճեան 40 , Եղբարքեան 40,
Սէլլաճեան 40. Յ. Թիւրքեան 40,
Ա. Թաշճեան 40. Հաճէթեան Եղբ. 40.
Ն. Մ. Աղալարմ 30, Տիկ. Իւ-
թիւճեան 30. Տէօքմէճեան 25,
Տիկ. Ն. Պ. Քէչէճեան 25. Մա-
լուճեան 20. Ոմն 30. Ոմն 20. Ա. Հա-
նըճեան 20. Ոմն 20. Այոտ Եղիկեան
20. Վ. Թէքէեան 20. Համագ ումար
4449 , 75 :

Նուիրատուութեան այդ ար-
գիւնքը ժամանակին հաղորդեցինք
Յօրեկանի կարգադր. մասնախմբին
մեր շնորհաւորական հետեւեալ հե-
ռագրով . « Յ. Քոչարեանին - Կահի-
րէի Հայ գաղութը Ձեր միջոցով կը
շնորհաւորէ արգիւնաշատ դրագէտ
Լէօի յօրելեանը , հաղար և հարիւր
Ֆրանկով կը մասնակցէ նուիրատու-
ութեան : Լաւանայ՝ Խէրեան » (Տե՛ս
Վրտակ թերթի թիւ 112) :

Թէ և հեռագրի մէջ ըսուած է
1100 ֆրանկ , սակայն craudit lyon-
nais չ'ընդունելով ֆրանկի փոխադ-
րութիւն , բուպլիի վերածեցինք և
ղրկեցինք Տիփիս (Լէօ) ի Առաքել
Բաբախանեանցի անուան նոյն գրա-
մատան միջոցով 415 բուպլի , օրը
արժեց 4316 զրուշ , վճարեցինք՝
գրամի փոխադրութեան 43 և հե-
ռագրի 101 զրուշ , ընդամէնը 4460
զրուշ :

Ա. ԼԱՄԱՆԱՆՑ
Գահիրէ 30 Յունիս 1908

Յ. Գ. - Այս առթիւ կը խնդ-
րենք անոնցմէ որոնք տակաւին
վճարած չեն իրենց արձանագրած
գումարը , հաճին ուղարկել մեզ .
ՆՈՅՆ

ԻՆՉԵՐԻ՝ ԸՆԴՈՒՆԱԿ ԵՆ

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԻՉՆԵՐԸ

ԹՈՒՆԱԻՈՐՄԱՆ ՄԻ ՀՐԷՇԱՅԻՆ
ՓՈՐՁ

Կարգալով Արփիարի սպանման հե-
ռագրեր , մենք մի բողէ անգամ չ'կաս-
կածեցինք թէ ո՛ւմ գործն էր այդ ոճի-
րը :

Արփիարի վրայ սպանութեան մի
ուրիշ փորձ կատարել էր արգէն նոյն
միտքի կողմից Անեստիկում . բայց
անյաջող :

Եւ որովհետեւ Արփիարը շարունա-
կու՛մ էր իր անխնայ մեղակոծան գոր-
ծը , խմբակը իր փրկութիւնը որոնեց
նրա մահուան մէջ :

Այդ խմբակը , որի ղեկավարն ու
հողին էին Վահէ Արզուհեան և Մար-
ցուկեան և վարչակազմը՝ այժմ կարգա-
լոյժ և Թաշանեանի սպանութեան
իր մեղակից բանտարկուած ու դատի
տակ , վերջին մի քանի տարիներէ ըն-
թացքում հաւաքել « Ձայն Հայրեն-
եաց » կոչուած թերթի չուրջը :

« Ձայն Հայրենեաց » ը Վեր. Հըն-
չակեաների օրգանն էր : Բայց անց-
եալ տարի այդ կուսակցութեան ցը-
քերում կատարուած պատակաւոր յե-
տոյ , դարձաւ միայն Վահէ Արզուհեանի
և իր մի քանի արբանեակների օրգա-
նը :

Արփիարի գէտ կատարուած զգուշ-
լի ոճերը՝ իմ մէջ զարթոնքներ արուար
յիշատակելի այն առիթի հսկայ ոճերաբարձի
թունաւորման այն հրէշային ծրարքի .
որի նիւթովն էր դարձեալ նոյն խմբա-
կը, իր սեւ - հոգի զեկաւարտութեամբ :
Դա մեր յեղափոխական պատմութեան
մէջ մի անբար շահատակութիւն է, ու-
րը մինչեւ այժմ ծածուկ էր մնում հա-
սարակական լայն շրջաններէն և ուր
այսօր, այս օրուր առիթով, հրապա-
րակ ենք հանում, ցոյց տալու համար
թէ ինչ բաների ընդունակ են մեր
« ազգի փրկիչները » ընդհանրապէս և
այդ խմբակը մասնաւորապէս . . .

1903 թ. Անգլո-թուրքիէն Լօնդոն է-
ին հաւաքել, իբր պատգամաւոր, 14
հին Հնչակեաններ, քննելու համար այն
ժամանակեայ տնտեսական կենտրոնի
(Սագունի, Արզումանեան - Տաշիրեան)
մի շարք գործերը և ընտրելու նոր
կենտրոնական մարմին :

Օրակարգի ամենաառաջը և ամե-
նաէական խնդիրը՝ Չիթեան - Մխոթ
սպանման խնդիրն էր :

Այն ժամանակ հին Հնչակեան շար-
քերում երկու որոշ հոսանք կարու կենտ-
րոնը փոխարկալից ու արիւնտա, և
կենտրոնի օպոզիցիան՝ իր ոյոշ ամ-
բաստանութիւններով :

Օպոզիցիան յաղթող հանդիսացաւ :
Կենտրոնը սեւաջաւ :

Այս պատգամաւորական ժողովը
տեւեց մօտ երեք ամիս :

Ճիշտ այդ օրերին Լօնդոն էին հա-
ւաքել նաեւ Վեր. Հնչակեանները :
Նրանք էլ պատգամաւորական ժո-
ղով ունէին, որը տեւեց միայն մի շա-
բաթ : Հապճեպով վճռեցին մի շարք
. . . ոճերին :

Հին Հնչակեանները պատգամաւոր-
ները հազիւ հասել էին և ժողովներն
պիտի, երբ մի օր կենտրոնական վար-
չութիւնը Մարտի 19-ի ստացաւ մի նա-
մակ՝ « Հրանց » ստորագրութեամբ :

Նամակագիրը ներկայացրել էր ի-
րան որպէս ուսանող՝ որ գալիս էր Պոլ-
սից Գիւրմանիա գնալու, և որովհետեւ
ինք անձանօթ էր վերամանրէն լեզուին
ինչպէս և ընդհանրապէս Սերպայի
փեանքին՝ խնդրում էր իրբու պողտիա-
քակցի օգնել իրան :

Կենտրոնական վարչութիւնը ա-
ռանց երկար բարակ մտածելու յայտ-
նեց որ, ինչպէս և ինչով կարող է
պատրաստ է աջակցել՝ երկու թէ երեք
օր էր անցել և ահա Լօնդոն, Բեֆնալ
րիւ թիւ 85 (Կենտրոնը) սան դուրը
քաղցում է մի երիտասարդ՝ սեւ ու կի-
սաղանդու մազերով, հազիւ 20 տարե-
կան, թուխ ու կրակոտ աչքերով :

Կենտրոնի անդամ Տաշիրեանը ըն-
դունեց նրան և տարաւ ուղղակի իր
բնակարանը : Այդտեղ, կողքի սենեա-
կում ապրում էր կենտրոնի միւս ան-
դամ Սագունին :

« Աւանդ » Հրանցը սկսում էր
գերմաներէն պարապել՝ Տաշիրեանի ա-
ռանցութեամբ : Նա օրուր որոշ ժա-
մերին գնում է, ման գալիս, որոշ ժա-
մերին տանը պարապում և հազիւ թէ
կենտրոն մտնում մի րոպով ուր շատ
անգամ գնում էր գրաշարի մօտ և նրա
հետ փոսակցում : Մի խօսքով Հրանցը
մեզ հետ մնաց ամբողջ մի ամիս և գը-
րաւեց գրեթէ բոլորիս վստահութիւնը :
Գրեթէ ասացի, որովհետեւ յիշում եմ
որ մեզանից մէկը միայն, հանգուցեալ
(սպանուած Լօնդոնում) Տիգրան Եղմիր-
եան (Արտորդ) բնագրաբար առում էր
այդ երիտասարդին, նա տանել չէր կա-
րողանում այդ « ուսանողին » ու միշտ
կրկնում. « Այս աղաւթից լաւ բան չեմ
սպասում » :

— Է՛հ, Տիգրան, ինչ կասածոսն ծա-
սում էինք մենք փորձած խեղճներս՝
անփորձ Տիգրանին :

Հրանցը մի երկու անգամ « հօրից »
փող ստացաւ : Իբր թէ նրա հայրը, վա-

ճատական Պոլսում, փող էր ուղարկում
Մարտի 19, իսկ այնտեղից էլ մի ինչ որ
մարդ՝ Լօնդոն, կենտրոնը՝ Տաշիրեանի
հասցէին :

Հրանցը իր փողերը առլիս էր Տա-
շիրեանին քր պահի :

Հրանցը սկզբում սրբաւ թէ անգլի-
երէն չէր իմանում, բայց ահա նա քս-
կըսել էր ուրիշներին հետ անգլիերէն
խօսել :

Իմ հարցին՝
Հրանց երբ սորվեցիր անգլերէն
անգլիերէն :

— Պոլիս Բօթբաթ Գօլէճը սովորած եմ
բայց մոռցած. հիմա կը վերսիշեմ, -
եղաւ պատասխանը :

Ամիսը վերջանալու վրայ էր և ա-
հա Հրանցը սպասում էր փողի՝ որ գնայ
Գերմանիա միայն թէ Պարիզի վրայով
ուղւում էր գնալ :

Հրանցը վերջին օրերը խիստ սի-
րալիք էր գէպի մեզ :

Նա շուտ - շուտ երեւում, մտնում
եղնում էր մեզ մօտ. բայց միեւնոյն ժա-
մանակ շուտ - շուտ գնում էր քաղաքի
այլ կողմերը : Ու այդ քոլորը մենք
բացատրում էինք նրանով, որ Հրան-
ցը ուղւում էր ուսումնասիրել Լօնդոնը
մտղէները և այլն . . . Ի հարկէ ու-
սումնասիրեց և այն էլ հրաշալիօրէն՝
միայն թէ մտղէի փոխարէն Լօնդոնի
Բեֆնալ ի փախուստի ճանապարհնե-
րը . . .

Հրանցը Տաշիրեանին խորհուրդ
էր հարցնում, թէ յարմար չէ՞ր արդ-
եօք Լօնդոնից մեկնելիս՝ փոխարէն ի-
րան ցոյց տրուած անքան սիրալիք ու
բարեկամական վերաբերմունքի, մի
ընթրիքով պատուել Հնչակեան պատ-
գամաւորներին, քանի որ նրանցից ա-
մեն մէկի վրայ նա նայելիս է եղել
մեծ հաւատքով ու յարգանքով :

Տաշիրեանը իր հաւանութիւնն է
տալիս, և պատրաստակամութիւն է
յայտնում մասնակցելու : Տաշիրեանը
յայտնելով մեզ Հրանցի այդ արամադ-
րութիւնը՝ իր կողմից շիշուում է, որ
հրաէջը մերժել ազեզ կը լինէր. երի-
տասարդը մի ուսանող է, ուղւում է մի
կերպ արտոյայտել իր զգացումները :
Ներկաներից միայն Ռոստոմը կարող
կերպով մերժում է ներկայ լինել ու-
ղւոր է գալիս . . .

Կէս օր էր ու մենք ցքուում էինք
մեր աները՝ ճաշելու ու մի փոքր հան-
գիտա անելու մեր յոգնեցուցիչ ժողով-
ներից : Ահա Հրանցը, անուշ ժպիտը
երեսին՝ մօտնում է մեզ ու ստում :

— Սիրելի ընկերներ, կը խնդրէի
ձեզ այս երեկոյ ժամը 8 ինչ ձեր ներ-
կայութեամբ պատուել իմ հրաէջը :

Ընթրիքը լինելու էր Հ. Արզու-
մանեանի (Կենտրոնի անդամ) բնակա-
րանում, այսինքն 85 Բեֆնալ րիւ - ում
վերի յարկում :

Հրանցը սպասած փազկը ստացել
էր և պատրաստել տուել մի համեստ
ընթրիք, որ բաղկացած էր մի երկու
տեսակ երշիկից, տապակած հաւից, խա-
ղողից ու Յ - 4 շիշ գինուց :

Գինին Լօնդոնում հազուադէպ էր
և թանկ :

Հակառակ Հրանցի բոլոր ջանքե-
րին Սագունին հիւանդացած լինելով՝
անկողից եղաւ ներկայ գտնուելի, իսկ
« Ռոստոմ » ը պարզապէս չեկաւ ու մին-
չեւ իսկ խիստ բարկացած հետացաւ :

Մնացեալներս մօտ 12 հոգի, երե-
կոյեան ժամի մօտ 7 ին, բարձրացանք
վերելի յարկը, որ ներկայ էին Տիկ -
Արզումանեան ու իր երկու զուակնե-
րը ինչպէս և Տիկ. Սագուն - Գիւլեան
և իր զուակները :

Հրանցը սանդուխի զլինի մեզ սի-
րալիք գիմաւորեց ու առաջնորդեց սը-
րան :

Նա մի քանի անգամ, մինչեւ սե-
ղան նստելը՝ գնաց Սագունու և Տիկ-
րանի ետեւից, որպէսզի նրանց էլ բե-

րի, բայց անկարող եղաւ :
Հրանցը մտանաւոր հոգածութեամբ
ոչ ոքին չէր յանձնել գինու շիշերը,
ինքն էր բաց արել և ինքն էլ պահել :
Ընթրիքի մնացեալ մասը Տիկ. Արզու-
մանեանն էր պատրաստել :

Մեզանից իւրաքանչիւրը իր սեղը
բունեց սեղանի շուրջը : Հրանցը կտր-
մըրած ու քրանած՝ գինու շիշերը իր
քով իսկ բերեց ու գրեց սեղանի վրայ :
Առաջին քաժակը միաձայն վճռեց
ձօնել « սիրելի » Հրանցին, « լաւ աը-
գայ » Հրանցին « ուսանող » Հրանցին :

Ու հրանցը աւելի կարմրեց, աւել-
լի քրանեց : Ընկերներից մէկը նրան
« երթաւ բարով » ի ճառ ասաց : Ու
մենք խմեցինք շուտ անուշ կարմիր գի-
նին :

Առաջին քաժակը խմելիս՝ Հրանցը
մի րոպէով դուռ եկաւ՝ անպատճառ գո-
նէ Ռոստոմին բերելու : Գինուց չի խը-
մեց, իր քաժակը այնտեղ մնաց . . .

Մենք մինչեւ նրա գալը երկրոր-
դեցինք, երրորդեցինք կենտրոնը ու
մինչեւ իսկ երգել սկսեցինք :

Անցել էր արդէն քաժակն ժամա-
նակ, երբ մենք գլխի ընկանք որ Հը-
րանցը չէր փեռագարձել : Մի րոպէ
այդ մասին խօսեցինք ու եկանք այն
եղբակացութեան օր երեւի շուտով կը
գայ, գոցէ գնացել է Սագունու կամ
Ռոստոմի մօտ . . .

Ժամը արդէն 11 ն էր, գինու շի-
շերը զատարկուել էին . . .

Գինուց խմել էին և՛ տիկիները
և՛ մինչեւ անգամ փոքրիկները :

Երբ արդէն սեղանի վրայ ոչինչ
չկար, նկատեցինք որ Հրանցն էլ չէր
երեւցել, չկար : Իրար անցանք :
Ինչ էր պատահել խեղճին : Չլինի մի
փորձանքի հանդիպած լինի, Դէս գէն,
մինչեւ ոտնկալատուռն փաղ սուրինք
որպէս էր նրանք էլ փնտնեն մեր ու-
սանող ընկերին : Ետպեցինք նաեւ
բնակարանը : Աջտեղ պանք միայն
քի զատարկ չեմօղան, իսկ Հրանցը՝ ոչ :
Ռոնիւրուց բեզարած՝ մեզնից իւրաքան-
չիւրը վերագարձաւ առն :

Հրանցը առանց իր քաժակը խմե-
լու առանց նորոնկալութիւն յայտնե-
լու հեռացել էր . . .

Նո սուն չհասած՝ զլխի պտոյա և
աղիքներ խիստ ցաւ զգացի :

Հաղիւ մի կերպ սուն ընկայ :
Տանտիկինս ուրիշ ոչ մի բան չունենա-
լով ձեռքի աակ՝ իբր զեղ՝ կաթ տուեց,
որ խմեմ, իմեցի որովհետեւ վառում
էր : Ու մինչեւ առաւօտ քաժակն առն-
ջուելուց յետոյ, կանտոն անից գործ
եկայ և մտայ Կենտրոն :

Այնտեղ հակառակ ամենօրեայ սո-
վորութեան, գտայ մեր ընկերներից
մի քանիսին, գունամափ, շիլլած ու
սարսափահար գէմքով :

Բարեւելուց յետոյ հարցնում եմ .
— Հը՛, ինչպէս էք :

— Դո՛ւ ինչպէս ևս, զինում է նրանց
պատասխանը :

Ու մի քանի խօսքերի փոխանա-
կումից յետոյ, ապշութեամբ նկատում
ենք որ բոլորս էլ նոյն հիւանդութիւ-
նից ենք րոնւած եղել :

— Եղբայր այդ ինչ տարօրինակ գինի
էր առաց մեզանից մէկը :

— Պետրոս, դու ինչ կասես այս փո-
րացաւին, հարցրի ևս ընկերքս, որ
ուշի ուշով ինձ էր գիտում և ինչ որ
խոր մտածման մէջ ընկզմել :

Պետրոսը զլուխը թափ տուեց ու՝
— Տղերք, գնանք վերել, ևս մի
բան եմ մտածում . . .

Բարձրացաւ վերել : Մենք էլ նրա
յետեւից : Ինչ անեսնք լաւ : Արզու-
մանեանի կինն ու երեխէքը նոյնպէս
գտնաւաժափ՝ առատօրէն փոխել են . . .

Պետրոսը վազեց գէպի սրահը, ուր
սեղանի վրայ մնացել էին դիւ ևս քա-
ժակները : Հուաքեց քաժակների տա-
կանքը մի շիշում ու բացագանչեց :

Գնանք սղերք քաժի ուշ չէ՛ բը-
ժըչի մօտ . . . մեզ թունաւորել են :

Մենք ապուշ կարած մի րոպէ չը
գիտեցինք ինչ անել : Մնացինք քարա-
ցած : Պետրոսն ու մի ուրիշ ընկեր՝
գինին տարան բժշկին : Թիշիլը հեղու-
կը քննելուց յետոյ, ձեկը էր այն եղ-
բակացութեան, որ գինին փուռաւոր-
ուած է . . .

Արևմտ մեր բոլորի կեանքը ազատ-
ւել էր այն բարեբաղդ հանգամանքից
որ թոյնը քաւակաւաւալի չէր . . .

Թունաւորման անյաջող փորձից մի
քանի օր յետոյ, Բեֆնալ րիւ ի փողոց-
ները ներկայեցին երեք հին Հնչակեան-
ների արիւնտալ : Ընկան իրար ետեւից
Սագունի, Համր և Ռոստոմ՝ Տերրո-
քիստ Թիրեաքեանի փորձ ու անսղբով
հարածներէց : Թէ ինչպէս և ինչու՞
այդ էլ կը պատմենք յաջորդ անգամ :

Իսկ այդ սերբորթաւի առաջնորդը
աջակիցը, ուրիշ խօսքով՝ նրա բաղու-
կը զինողը՝ մեր նայն այդ « սիրելի
ուսանողն » էր, « Հրանցը », որ թագ-
նըւած ապրում էր Լօնդոնում իր « միս-
սիան » մինչեւ վերջը տանելու համար :

Իսկ նրա « հայրը » . . . վահէ Ար-
զուեանը :

Այսպիսի արիւնտա խրախօսանքներ
սարբող « յեղափոխական խմբից զեւ
ինչե՛ր կարելի է սպասել :

ԿԱՐՄԻՔ ԿՐԱՆՁԱՆՔԻՆ

Թունաւորման անյաջող փորձից
յետոյ Բեֆնալ րիւ ի փողոցները ներկը-
ւեցին, առում էինք երեք հին Հնչակ-
եանների արիւնտալ :

Աւելի հասկանալի դառնալու հա-
մար քիչ հեռուից սկսեց :

1896 թ. ին Նաղարայի և Ար-
փար Արփիարեանի օտարաբնակաւոր
այնքան ազդակից կերպով պատակ-
տուող Հնչակեանները 1902 թ. սկզբնե-
րին, ցնծութեան ու ողբերգութեան
ազազակներով մէջ, հայ աշխարհին ա-
ւետեցին երկու հատուածների՝ հիների
և վերակազմեալների միութիւնը, որ
կնքուել էր Լօնդոնում :

Երկու ֆրակցիաները իրանց հաւ-
ւածային գործերը իբրև թէ լիկւիդա-
ցիայի էին ենթարկել և ձուլել, այս-
ինքն սկզբունքային և տակտիկային
տեսակէտից միանգամայն համաձայնու-
